ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ,ք.Կապան Շահումյան 20/32, 3301:
Հեռ. (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1200, գինը՝ 100 դրամ

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 22 ՕԳՈՍՏՈՍԻ 2019Թ.
№ 17 (507)
www.syuniacyerkir.am

Ինչպե՞ս չըսիրեմ,
Երկիր իմ կիզված,
Պարզված վերըսփին
Սրերին սուրսայր...

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ

Ամուր ընտանիք, ծաղկուն Կապան.

այսպիսի խորագրով օգոստոսի 17-ին անցկացվեց Կապան քաղաքի օրը

Նախկինում այն տեղի էր ունենում սեպտեմբերին, բայց այս անգամ օգոստոսին եղավ, որ հայրենի քաղաքի տոնին մասնակից լինեն մայրաքաղաքում սովորող կապանցի ուսանողները, ամառային հանգիստը ծննդավայրում անցկացնող՝ արտերկրում բնակվող կապանցիները:

Համաքաղաքային քայլերթով սկսվեց տոնակատարությունը:

Քաղաքի օրվան նվիրված օրհնության կարգ կատարվեց Կապանի սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում:

Այնուհետեւ երիտասարդները քաղաքի տոնի իրազեկման ակցիա եւ ֆլեշմոբ կազմակերպեցին:

Օրվա հիմնական միջոցառումը տեղի ունեցավ Կապանի մշակույթի կենտրոնում, որտեղ կայացավ հանդիսավոր նիստ ու տոնական համերգ:

Նախ ներկաներին օրհնանքի խոսք հղեց Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Տեր Մակար վարդապետ Հակոբյանը:

Կապանի երկրագիտական թանգարանի տնօրեն Գրիշա Սմբատյանը պատմական անդրադարձներով ներկայացրեց Կապանը՝ նշելով, որ Կապանի հարստությունը ոչ թե պղինձն ու մոլիբդենն է, այլ մարդը՝ կապանցին, որ միշտ հավատարիմ է մնացել իր օջախին:

Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանը ներկաներին փոխանցեց. *«Քաղաքն իր պատմությամբ ու ավանդույթներով, ձեռքբերումներով, ապագային միտված ծրագրերով*

էջ 8

Սյունիքում հրդեհներ էին...

«911» ծառայությունն օգոստոսի 11-ին, ժամը 16:03-ին ահազանգ է ստացել, որ հրդեհ է բռնկվել Սյունիքի մարզի Լեհվազ-Վարդանիձոր ավտոճանապարհին գտնվող անտառում:

Ինչպես «Արմենպրես»-ին հայտնեցին ՀՀ ԱԻՆ տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից, դեպքի վայր է մեկնել ԱԻՆ ՓԾ մարզային փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ. հայտարարվել է Մեղրիի ՀՓՋ-ի անձնակազմի հավաք:

Տեղազննման արդյունքում պարզվել է, որ Լեհվազ-Վարդանիձոր ավտոճանապարհի աջակողմյան հատվածում այրվում է բուսածածկ տարածք եւ եղեւնուտ, տեղանքը խիստ կտրտված է եւ դժվարանցանելի, առկա է հրդեհի տարածման վտանգ:

Հրդեհաշիջման գործընթացին ներգրավվել են Մարզային փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից երկու մարտական հաշվարկ եւ օպերատիվ խումբը (15 հրշեջ-փրկարար), Փրկարարական ուժերի վարչության հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնից երկու փրկարարական ջոկատը (10 փրկարար), Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի արտակարգ իրավիճակների արձագանքման խումբը (4 փրկարար) եւ Օպերատիվ կառավարման վարչության կապի մեքենան (3 փրկարար):

Ժամը 21:00-ին ԱԻ նախարարի մոտ կայացած օպերատիվ աշխատանքային խմբի արտահերթ նիստում քննարկվել են ստեղծված իրավիճակով պայմանավորված ռիսկերը, արձագանքման եւ հետեւանքների վերացման առանձնահատկությունները:

Օգոստոսի 12-ին, ժամը 08:10-ին ծավալվել է օպերատիվ շտաբ: Հրդեհաշիջման գոր-

էջ 2

Կառավարությունը 2019թ. հաստատել է մարզերում իրականացվելիք 23.2 մլրդ դրամի սուբվենցիոն ծրագիր

ՀՀ կառավարությունը 2019թ. ընթացքում 23.2 մլրդ դրամի սուբվենցիոն ծրագիր է հաստատել, որոնք կիրականացվեն Հայաստանի մարզերում: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ այս մասին «Ֆեյսբուք»-ի իր էջում գրել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

«Սուբվենցիոն ծրագրերի առանձնահատկությունն այն է, որ դրանք համաֆինանսավորվում են համայնքների եւ կառավարության կողմից: Տվյալ դեպքում 12.9 միլիարդը տրամադրում է կառավարությունը, 10.3 միլիարդը համայնքները», – գրել է Փաշինյանը:

Վարչապետը ներկայացրել է այն միջոցառումները, որոնք կիրականացվեն այս ծրագրի շրջանակներում

«234 կիլոմետր համայնքային փողոցներ կնորոգվեն կամ կբարեկարգվեն, 58 բնակավայրերում կիրականացվի ջրամատակարարման եւ ջրահեռացման համակարգերի կառուցման կամ նորոգման աշխատանքներ, 37 բնակավայրերում կկառուցվեն կամ կնորոգվեն ոռոգման համակարգեր, 42 բնակավայրերում կիրականացվի մանկապարտեզների կառուցում կամ հիմնանորոգում, 58 բնակավայրերում կգործարկվեն էներգախնայող լուսավորության համակարգեր, 53 բնակավայրերում կկառուցվեն կամ կնորոգվեն հասարակական նշանակության շենքեր, 15 բնակավայրերում կիրականացվեն գազամատակարարման համակարգերի կառուցման կամ նորոգման աշխատանքներ, 23 բնակավայրերում ձեռք կբերվեն հակակարկտային համակարգեր, 24 բնակավայրերում կիրականացվեն պուրակների, հրապարակների, այգիների կառուցման կամ բարեկարգման աշխատանքներ», – նշել է վարչապետը: ■

Սյունիքի մարզում իրականացվում են ականազերծման աշխատանքներ

«Հումանիտար ականազերծման եւ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը (ՀԱՓԿ) Սյունիքի մարզի Կապան համայնքի Դավիթ Բեկ եւ Տեղ համայնքի Կոռնիձոր բնակավայրերում ականազերծման աշխատանքներ է իրականացնում:

Ինչպես տեղեկացրին կենտրոնից, Դավիթ Բեկ բնակավայրում ականազերծման աշխատանքներն ընթանում են «Ականազերծման եւ ուտիլիզացիայի հիմնադրամի» հետ համագործակցությամբ: Շուրջ 16 հազար քառակուսի մետր տարածքի ականազերծում է նախատեսվում: Այս պահի դրությամբ՝ հայտնաբերվել են 1 հատ «Ֆ1» նռնակ, 1 հատ «OZM 72» ական, 1 հատ 73 միլիմետր տրամագծով «ՕՀ» արկ:

Կոռնիձոր բնակավայրում իրականացվում են մարտական գործողությունների տարածքի մաքրման աշխատանքներ: Ըստ ՀԱՓԿ-ի պլան-առաջադրանքի՝ «Հալո Թրաստ» կազմակերպության կողմից նախատեսվում է մաքրել շուրջ 30 հազար քառակուսի մետր տարածք:

Աշխատանքների ժամանակ օգտագործվում են ԱՄՆ Պետական դեպարտամենտի կողմից Հայաստանին տրամադրված հանդերձանքն ու սարքավորումները: ■

Ո՞վ է սննդով եւ փողով աջակցում Ամուլ սարի շահագործման դեմ գործընթացին

Ֆեյսբուքի ուղիղ եթերում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, խոսելով Ամուլսարի ոսկու հանքի շահագործման խնդիրների մասին, արել է սենսացիոն հայտարարություն: Նա ասել է, որ օպերատիվ ծառայություններին հանձնարարել է ուսումնասիրել վիճակը, եւ պարզվել է, որ այլ հանքարդյունաբերական ընկերությունն աջակցում է Ամուլսարի հանքի շահագործման դեմ գործընթացին:

Հիշեցնենք, որ հանքի ճանապարհի փակումից հետո ԶԼՄ-ներում տեղեկություններ տարածվեցին, որ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն աջակցում է Ամուլսարի շահագործման դեմ գործընթացին փողով եւ սննդով:

hraparak.am

Բացարձակորեն դեմ եմ. Արամ Ա Կաթողիկոսը Ստամբուլյան կոնվենցիայի մասին

Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսը խոսել է Ստամբուլյան կոնվենցիայի մասին:

«Որեւէ փաստաթուղթ, ով էլ լինի դրա հեղինակը, որքան էլ կարեւոր լինի այն, որեւէ մտածելակերպ, որը կարող է վնասել հայ ընտանիքին, հոգեւոր, բարոյական, ազգային արժեքների համակարգին, որպես Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո, բացարձակորեն դեմ եմ», - հայտարարել է նա:

Նա նշել է, որ որեւէ փաստաթուղթ, որը զգայուն բնույթ ունի, եւ որեւէ հարց, որը համահայկական հետեւանքներ կարող է ունենալ, պետք է քննարկվեն համահայկական մասնակցությամբ: ■

Սյունիքում հրդեհներ էին...

էջ 1

ծընթացին ներգրավվել են ԱԻՆ ՓԾ մարզային փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատներից եւս 30 հրշեջ-փրկարար:

Հետախուզման արդյունքում պարզվել է, որ հրդեհը տարածվել է մոտ 10-12 հա բուսածածկ տարածքում, այրվել են խոտածածկույթ, գիհի եւ եղեգնուտ:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 09:46-ին:

Հրդեհաշիջման աշխատանքներին մասնակցել է 67 փրկարար (4 մարտական հաշվարկ), ԱԻՆ ՓԾ օպերատիվ կառավարման վարչության կապի մեքենան, ՊՆ Մեղրու N զորամասից 30 ծառայող, Մեղրու ոստիկանության՝ 45, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Սյունիքի մասնաճյուղի՝ 25 (8 միավոր տեխնիկա), «Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի՝ 15, «Արեւիկ» ազգային պարկի 15 աշխատակից եւ Մեղրու ՃՇՇ-ից մեկ միավոր տեխնիկա:

Հրդեհի վայրում իրականացվել է հերթապահություն:

Օգոստոսի 14-ին, ժամը 18:00-ին «Արեւիկ» ազգային պարկից տեղեկություն է ստացվել, որ Սյունիքի մարզի Լեհվազ-Վարդանիձոր ավտոճանապարհի մոտակա անտառում կան ծխացող օջախներ:

Դեպքի վայր է մեկնել ԱԻՆ ՓԾ մարզային փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից երկու մարտական հաշվարկ:

Հրդեհաշիջման գործընթացին ներգրավվել են Փրկարարական ուժերի վարչության հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնից երկու փրկարարական ջոկատ, Մարզային փրկարարական վարչության երկու օպերատիվ խումբ եւ մարզային փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատի ազատ հերթափոխից 10 հրշեջ-փրկարար:

Ժամը 22:30-ին հրդեհաշիջման աշխատանքները դադարեցվել են. 10 հրշեջ-փրկարարների եւ «Արեւիկ» ազգային պարկի 10 աշխատակիցների կողմից սահմանվել է հերթապահություն:

Օգոստոսի 15-ին, ժամը 06:30-ին հրդեհաշիջման աշխատանքները վերսկսվել են. այրվել է 2 հա բուսածածկույթ, առկա է մոտ 25 ծխացող օջախ: ■

Այրվել է մոտ 60 հա բուսածածկույթ

Օգոստոսի 20-ին, ժամը 11:00-ին Սյունիքի ՄՃԿԿ ահազանգ է ստացվել, որ Գեղիի ջրամբարի մոտ այրվում է բուսածածկույթ:

Դեպքի վայր են մեկնել ԱԻՆ ՓԾ Սյունիքի մարզային փրկարարական վարչության երկու օպերատիվ խումբ, ՄՓՎ պետ, փ/ծ գնդապետ Բ. Զաքարյանի գլխավորությամբ, ԱԻՆ ՓԾ Քաջարանի հրշեջ-փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ եւ ԱԻՆ ՓԾ Կապանի հրշեջ-փրկարարական ջոկատից երկու մարտական հաշվարկ:

Ժամը 21:30-ի դրությամբ այրվում է մոտ 60 հա բուսածածկույթ:

Աշխատանքները համակարգելու նպատակով օպերատիվ շտաբ է ծավալվել Գեղավանք գյուղում:

Հրդեհաշիջման աշխատանքներին մասնակցում են 35 հրշեջ-փրկարար, Կապանի անտառտնտեսության 30 աշխատակից, «Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի 20 աշխատակից, տնօրեն Ա. Մկրտչյանի գլխավորությամբ, եւ 10 գյուղացիներ:

Սյունիքի Մարզային Փրկարարական Վարչություն

Աննա Շահնազարյան

Ես խորհուրդ կտայի վարչապետին դիմել իրավապահ մարմիններին, որովհետեւ հակառակ դեպքում, դա կարող է դիտվել որպես սուտ մատնություն, եւ ինքը պարտավոր է այդ հետեւանքների մասին մտածել: Այս մասին NEWS.am-ի հետ զրույցում ասաց Հայկական բնապահպանական ճակատի ներկայացուցիչ Աննա Շահնազարյանը՝ արձագանքելով վարչապետ Նիկոլ Փաշինյանի հայտարարությանը, թե հակաամուլսարյան գործընթացն աջակցություն է ստանում հանքարդյունաբերող այլ ընկերությունների կողմից:

«Եթե նման բան կա, եթե իսկապես նա մեղադրանք է հնչեցնում, ապա իրավապահները պարտավոր են զբաղվել դրանով», – ասաց նա:

Արմեն Դարբինյան

Հայաստանը աղքատ երկիր է. այս բարբաջանքի ներքո են հանքերը թալանել

ՀՀ նախկին վարչապետ Արմեն Դարբինյանը Թվիթերում գրել է.

Հանքերի շահագործումը երկրում ոչ միայն էկոլոգիական խնդիր է: Գործող օրենսդրությունը հատուկ ստեղծված է հանքերն իսպառ թալանելու համար: Ժողովրդին հրամցվել են ընդամենն «աշխատատեղ» եւ «աշխատավարձ» կեղծ արժեքները: Գերշահույթը մնացել է դրսերում, երկրի բյուջեն չի օգտվել ռոյալթի հարկից:

Ոլորտի մի քանի նախարար լիցենզիաների բաշխմամբ դոլարային միլիոնատերեր են դարձել: Եթե կառավարությունը չփոխեց խաղի կանոնները, վաղ թե ուշ հաշվելու ենք հերթական նախարարի միլիոնները: Ընդերքը ժողովրդի սեփականությունն է: Պետական բյուջեն ընդերքի մասհանումից պիտի տոկոս ստանա՝ ռոյալթի:

Ընդհանուր առմամբ, իհարկե, պետք է գնալ հանքարդյունաբերության տեսակարար կշռի անընդհատ նվազման ճանապարհով՝ մինչեւ դրա զրոյացում: Փոքր տարածք ունեցող երկրի համար ամեն մի մետրը կարեւոր է: Ամեն մի մետրը ծաղկացնել է պետք: Ագարակի, Քաջարանի համար առանձին replacement-ի ծրագրեր են պետք:

«Հայաստանն աղքատ երկիր է» - այս բարբաջանքի ներքո են հանքերը թալանել: Ամեն տեղ լաց են եղել, վիզները ծռել ու ողորմություն են խնդրել, աղքատ երկրի պատկեր են ձեւավորել: Մինչդեռ քառակուսի մետրին ընկնող հանքերի պարունակությամբ մենք ՀԱՐՈՒՏ երկիր ենք, կարելի է ասել նաեւ՝ ՀԱՆՔԱՅԻՆ երկիր ենք:

Վերելակը եւս խնամք է պահանջում

Կապանի քաղաքային տնտեսության ենթակառուցվածքների մի անբաժան մասն է վերելակային տնտեսությունը, որ հայ-ադրբեջանական հակամարտության տարիներին (1992-1994 թվականներ) հայտնի պատճառներով (պատերազմ, տնտեսական շրջափակում եւ այլն) անգործության մատնվեց, այլեւ մարզկենտրոնի վերելակների մի մասը պարզապես թալանվեց: 1990-ականներին քաղաքի 159 վերելակից մի քանիսն էր գործում:

Այդ ժամանակներում մի զվարճապատում պատմություն կար. Լեռնիկ անունով մի բարի, զվարճասեր մարդ օրերից մի օր քեֆը տնգոզտնգոզ, ոտքերը հազիվ քարշ տալով, գալիս- կանգնում է Դավիթ Բեկ արձանի դեմ դիմաց, գլուխը վեր բարձրացնում, շունչը տեղը բերում եւ «ախպերավարի» դիմում զորավարին.

– Իջիր ձիուց, լիֆտ չկա, 13 հարկ ո՞նց բարձրանամ:

Միայն 2000 թվականից հետո Կապանի վերելակային տնտեսությունը սկսեց կենդանության նշաններ ցույց տալ (նաեւ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի այն ժամանակվա տնօրեն Մաքսիմ Հակոբյանի աջակցությամբ): Իսկ 10-14 վերելակ հիմնովին թալանել էին, դրանց մեքենայական հորաններում աղբի կույտեր էին գոյացել, մինչեւ այսօր նման վերելակներ կան Բաղաբերդ եւ Ձորք թաղամասում: Բաղաբերդ թաղամասի 2«ա» շենքի առաջին մուտքի վերելակի մեքենայական հորանում մոտ երեք մետր բարձրությամբ աղբ է կուտակվել: Այսօրվա դրությամբ թալանված վերելակներից չորսը վերականգնվում է. նման վերելակների վերանորոգումը երեք-չորս մլն դրամ արժե:

Այստեղ ցանկանում ենք մի շեղում կատարել խնդրո առարկայի առնչությամբ: 1990-ական թվականներին հանրային եւ պետական բնակֆոնդի սեփականաշնորհումը փոփոխություններ մտցրեց բնակարանների շահագործման, սպասարկման եւ կառավարման ոլորտում: Որպես իրավունքի եւ սեփականության ձեւ հանդես եկան համատիրությունները, վերելակներն էլ անցան համատիրությունների տնօրինությանը: Եվ քանի որ անցած երկու եւ ավելի տասնամյակում համատիրություններն այդպես էլ չկայացան (սա ողջ հանրապետության կտրվածքով), վերելակների սպասարկման եւ նորոգման գործում էլ խնդիրներ ծագեցին: Երբ վերելակը խափանվում է, բնակիչը երբեմն հին օրերի հանգույն դիմում է համայնքապետարան կամ մարզպետարան, որոնց գործառույթների մեջ չի մտնում վերելակների նորոգումը:

Այժմ «Վերելակ» ԱԿ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Սամվել Մկրտչյանի փոխանցմամբ՝ 159 վերելակից գործում է 70-ը, ընդհանուր առմամբ՝ Կապանի վերելակների 70 տոկոսը նորոգման կարիք ունի. ինչպես տեղեկացանք «ԱՆդոկ» համատիրության նախագահ Արամ Մանուչարյանից, համատիրության մեջ մտնող բազմաբնակարան շենքերի 13 վերելակից մարտի 19-ի դրությամբ 4-ը չի աշխատում: Ընդ որում՝ Կապանի ոչ բոլոր վերելակներն են այդ ընկերության սպասարկման տիրույթում: Կան բնակիչներ, ովքեր սեփական նախաձեռնությամբ են իրենց մուտքի վերելակը սպասարկում: Իսկ այն վերելակների համար, որ նորոգում է «Վերելակ» ՍՊ ընկերությունը, նաեւ մեկ տարվա երաշխիքային սպասարկում է նախատեսված, որը եւ իրականացնում է ընկերությունը:

Սամվել Մկրտչյանը 1980-ից է աշխատում վերելակային տնտեսությունում, էլեկտրիկից հասել է տնտեսության ղեկավարի պաշտոնին: Աշխատանքին զուգընթաց հեռակա կարգով ավարտել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի էլեկտրատեխնիկական ֆակուլտետը: Խորհրդային Միությունը փլուզվելուց հետո, երբ թափ առավ կոոպերատիվ շարժումը, ստեղծեց «Վերելակ» արտադրական կոոպերատիվը, որ մասնագիտացած էր վերելակների նորոգմամբ եւ սպասարկմամբ: Նման աշխատանքներ է իրականացրել Քաջարանում, Մեղրիում, Գորիսում, նաեւ Վայքում:

Խնդիրն այն է, որ վերելակից օգտվելու տարրական նորմերը պիտի պահպանել: Մինչդեռ ոմանք մարդատար վերելակը բեռնատարի տեղ են օգտագործում՝ շինարարական նյութեր, վառելափայտ, կահույք, այլ ծանր իրեր բարձրացնելով ութերորդ, իններորդ հարկեր: Իսկ բնակարանները նորոգելուց հետո շինարարական աղբը պարկերով դարձյալ վերելակով են իջեցնում՝ մարդատար վերելակին փոխանցելով բեռնատարի գործառույթ: Երբ բնակչին դիտողություն են անում, պատասխանում է՝ ինձ այդպես է ձեռք տալիս: Նման «ինքնագործունեությունը» հղի է անկանխատեսելի հետեւանքներով: Դա մերժելի, եթե չասենք վտանգավոր քայլ է, քանզի մարդատար վերելակի բեռնատարողությունը 320 կգ է: Բացի այդ՝ վերելակով երթեւեկելիս խցիկում չորս մարդուց ավելի չպիտի լինի: Այլապես չեն դադարի խոսակցությունները, թե՝ մնացել եմ վերելակի մեջ:

Խորհրդային տարիներին գործում էին դիսպետչերական (ենթակարգավարական) ծառայություններ (Կապանում նման 14 ծառայություն կար), քաղաքի բոլոր վերելակները կապված էին այդ ծառայությանը, որեւէ վթար վերելակում իսկույն արձանագրվում էր դիսպետչերական վահանակի վրա, քաղաքի ամեն մի թաղամասում չորս օպերատոր կար, երկրորդ հերթափոխին գործում էին շրջիկ վերելակավարներ, 20 վերելակին մի էլեկտրամեխանիկ էր սպասարկում, բայց այսօր այդ համակարգը հուշ է դարձել, դրանք վերացան, կան դեպքեր, երբ այժմ վերելակի հորանի բանալին պատահական մարդկանց ձեռքին է: Իսկ վերելակների անվտանգությունը խնդրահարույց է. վերջերս հանրապետական մամուլում մի տեղեկատվություն կար, որ մայրաքաղաքում մի քաղաքացի վերելակի հորանն է ընկել եւ մարմնական վնասվածքներով հոսպիտալացվել: Եղել են նաեւ մահվան ելքով դեպքեր: Սատանայի ականջը խուլ, մեզանում նման ցավալի դեպքեր չեն արձանագրվել:

Ավելի վաղ մեր թերթին տված հարցազրույցում («Սյունյաց երկիր», 15 դեկտեմբերի 2017 թ.) «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի Սյունիքի մարզի փորձաքննության բաժանմունքի տնօրեն Կարեն Մկրտչյանը հավաստիացրել էր, որ 2011-ին բացասական եզրակացություն էր տրված վերելակներ մեծ մասին, ապա այժմ իրավիճակը զգալիորեն շտկվել է:

Սամվել Մկրտչյանի հավաստմամբ, որ վերելակը նորոգում են, տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի փորձաքննությամբ անցկացվում է, բայց նաեւ հավելեց, որ վերելակների շահագործումը եւ սպասարկումը «մենակով» հնարավոր չէ, բնակչությունից հավաքած գումարը՝ 10 հազար դրամ (մեկ ամսվա սպասարկման վարձն է), շատ քիչ է այն դեպքում, երբ վերելակի շարժիչը կամ տրանսֆորմատորը շարքից դուրս են գալիս, բնականաբար այդ մասին պիտի մտածի բնակիչը: Խնդիր է նաեւ այն, որ վերելակի սպասարկման վարձ մուծում են երրորդ հարկից բարձր ապրող բնակիչները: Ցածր հարկերում (մեկից երրորդ) բնակվողները պատճառաբանում են, որ վերելակից չեն օգտվում, բայց նույն այդ բնակիչներն իրենց մուտքի հարեւանի բնակարան (ասենք՝ իններորդ հարկ) բարձրանալու համար օգտվում են նույն այդ վերելակից...

Սամվել Մկրտչյանը զրույցի ընթացքում մի օրինակ էլ բերեց. խոսքը Դավիթ Բեկ թաղամասի 13 հարկանի 8-րդ շենքի վերելակի մասին է (դիսկոտեկայի շենք), որից օգտվում են հարեւան բազմահարկերի բնակիչները, ինչը լրացուցիչ դժվարություններ է հարուցում սպասարկման վարձավճարների հավաքման հարցում: *«Ինչո՞ւ ես պիտի եւ վերելակի տեխնիկական վիճակի մասին մտածեմ, եւ մի մարդ էլ նշանակեմ, որ բնակչից սպասարկման վարձավճար հավաքի,* – այնուհետեւ զրուցակիցս հավելում է, – *տասը հազար դրամ է սպասարկման վարձը, օրական կազմում է 330 դրամ, նման գումարով երկար չես կարող աշխատել, եթե լուծում չգտնվի... ինչպես նախկինում կար շրջիկ վերելակավար եւ այլն»:*

Ո՞րն է ելքը, ընկերության ղեկավարն ի՞նչ կցանկանար փոխանցել բնակչությանը, ովքեր Աստծո ամեն օր օգտվում են վերելակից. *«Վատն այն է, որ որոշ մարդկանց կենցաղավարման կուլտուրան շատ հեռու է բավարար լինելուց: Խոսքս այս դեպքում ոչ այնքան վերելակից օգտվելուն, որքան այն պահպանելուն է վերաբերում: Ցավով կարելի է նկատել, որ ծխախոտով վառում են կանչի սեղմակները, որոնցից մեկը 12-15 հազար դրամ է, եւ այսօր դժվար է ճարվում: Փառք Աստծո, երկու տարի առաջ վարկ եմ վերցրել, անհրաժեշտ պահեստամասեր ձեռք բերել, բայց դա չի նշանակում, որ բնակիչը աջուձախ պիտի փչացնի: Այսօր առավել, քան երբեւէ վերելակների պահպանության հարցն է ծառացել: Կամ անպարկեշտ գրություններ են թողնում խցիկի պատերին՝ մոռանալով, որ վաղը, մյուս օրը դարձյալ իրենք կամ իրենց հարազատը պիտի օգտվեն այդ վերելակից,* – մտահոգությունն է հայտնում Սամվել Մկրտչյանը եւ բերում կոնկրետ օրինակներ, – *կան վերելակներ, որոնց նորոգումից հետո մեկ ամիս անց, երբ մտնում ես, ոնց որ մոնղոլքաթարական արշավանք է անցել այդտեղով: Ասենք, վերելակը նորոգեցինք, մի տարի էլ երաշխիքային սպասարկում իրականացրինք, հետո՞... Վերելակին տիրություն պիտի արվի: Ոչ մի նորոգում սպասված արդյունքը չի տա, եթե հոգատարությամբ չպահպանվի արվածը: Բայց կան մուտքեր, որոնց բնակիչները խնամքով են վերաբերում վերելակներին: Պիտի ասեմ, որ վերելակների նորոգման խնդրով հանդիպել եմ Կապանի համայնքապետ Գեւորգ Փարսյանին, զգացել եմ նրա սրտացավությունը, նա մեծ ցանկություն ունի, որ համայնքի բնակելի շենքերի տանիքների եւ վերելակների խնդիրները շուտափույթ լուծում ստանան»:*

Այս ամենի մեջ ամենալուսավոր կետն այն է, որ ՀՀ կառավարության 2018 թ. սեպտեմբերի 27-ի որոշմամբ նախատեսված առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների շրջանակում ներառված է Կապան քաղաքի բազմաբնակարան շենքերի վերելակների վերանորոգումը: Նախատեսվում է վերանորոգել 42 վերելակ, որը վստահված է «Վերելակ» ԱԿ արտադրական կոոպերատիվին:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

> *«Վերելակ» ԱԿ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Սամվել Մկրտչյանի փոխանցմամբ՝ 159 վերելակից գործում է 70-ը, ընդհանուր առմամբ՝ Կապանի վերելակների 70 տոկոսը նորոգման կարիք ունի*

> *1990-ական թվականներին հանրային եւ պետական բնակֆոնդի սեփականաշնորհումը փոփոխություններ մտցրեց բնակարանների շահագործման, սպասարկման եւ կառավարման ոլորտում: Որպես իրավունքի եւ սեփականության ձեւ հանդես եկան համատիրությունները, վերելակներն էլ անցան համատիրությունների տնօրինությանը*

> *Կապան քաղաքի Բաղաբերդ թաղամասի թիվ 9 շենքի 2-րդ մուտքի վերելակը խափանվել է, քաղաքացիները մնացել են ներսում...*
> *Դեպքի վայր է մեկնել ԱԻՆ ՓԾ հրշեջ-փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ:*
> *Փրկարարները եւ վերելակավարը քաղաքացուն դուրս են բերել վերելակից:*
>
> **Քաղվածք ԱԻՆ-ի հաղորդումներից**

Ով չի եղել Երիցու վանքում, չի եղել Կապանում

«Ուխտագնացություն Սյունիք» ծրագրի շրջանակում «Սյունյաց երկրի» արշավային այցերը, ինչպես արդեն ասել ենք, օրեր առաջ սկսեցինք Պատմահայր Մովսես Խորենացու ենթադրյալ գերեզմանից, որ գտնվում է Տեղ գյուղի մերձակայքում՝ Սռի եղցու բակում:

Դա ուխտագնացության առաջին ճանապարհն էր:

Երկրորդ ճանապարհը մեզ տարավ Երիցվանք, որին նաեւ Կարմիր վանք են անվանում, Նոր Երուսաղեմ, Սուրբ Նախավկա, Երիցավանք, Երիցավան, Երիցվանիկ, Երիցու վանք:

«Սյունյաց երկրի» ստեղծագործական խմբին (Սամվել Ալեքսանյան, Մարիամ Սարգսյան, Արմինե Մարգարյան) ուղեկցում էր Կապանի երեւելի զավակներից մեկը՝ Օնիկ Աթայանը, ով, լինելով վանքին մերձակա Մողես (Կաղնուտ) գյուղի զավակ, հանգամանալից ծանոթ է այդ վայրերին, քաջատեղյակ բազում ավանդազրույցների:

Երիցվանքը գտնվում է Արծվանիկ գյուղից փոքր-ինչ արեւելք՝ բարձր ու գեղատեսիլ սարավանդի վրա:

Հնում մտնում էր Սյունիք աշխարհի Բաղք կամ Քաշունիք գավառի մեջ:

Կապանից Արծվանիկ, ապա եւ Երիցվանք բարձրանալու ընթացքում, նաեւ այնտեղ, վերհիշեցինք այդ սրբավայրի հետ կապված պատմություններ…

Եվ երբ արդեն բարձունքում էինք, մեզ՝ հատկապես առաջին անգամ այցելողներիս, թվում էր, թե ուր որ է տեսնելու ենք Սյունյաց իշխանուհի Սահակիա բարեպաշտ ու մեծահավատ տիկնոջը, ով ուղեկցում էր հայոց սուրբ կաթողիկոս Մուշեին (ոսկեզօծ թամբով սպիտակ ջորին հեծած, եպիսկոպոսներով, բազմախումբ սպասավորներով), որ եկել էր Երիցվանք՝ Սյունիքի մետրոպոլիտության աթոռի համար արժանավոր մեկին ընտրելու խնդրով:

Թվում էր, ուր որ է, մեկուկես հազարամյակի հեռավորությունից, կտեսնենք Սուրբ Երիցակին՝ Երիցվանք-Նոր Երուսաղեմ-Սուրբ Նախավկան կառուցելիս (519 թ., Վահան Մամիկոնյանի՝ հայոց մարզպանության ժամանակներ):

Եվ կտեսնենք, թե ինչպես է սպիտակ աղավնիների երամից մի աղավնի առանձնանում՝ սլանալով գալիս ու կանգնում Երիցակի վրա, ինչից հետո Տեր-Մուշե հայրապետը նրան օծում է Սյունիքի մետրոպոլիտ, իսկ Երիցվանքը հռչակում Սյունյաց աստվածասկիզբ թեմի կենտրոն:

…Ավա՜ղ, այդ ամենը ոգեւորված «Սյունյաց երկրի» անուրջների տիրույթում էր:

Իրականում, մինչդեռ, տեսանք անուշադրության մատնված, կիսավերակ մի սրբավայր…

Ժամանակին, սակայն, ըստ Սյունյաց տան պատմիչի՝ *«Այնտեղի վանքը գեղեցիկ էր, զարմանալի տեսքով… պարսպապատված մեծամեծ քարերով. պարսպից ներս կային շուրջ քառասուն խցիկներ՝ քուրձ հագնող լռակյաց ճգնավորներով…»:*

Բայց դարերի անուշադրությունից ու հարյուրամյակների փորձություններից հետո անգամ մերօրյա Երիցվանքը շարունակում է մնալ իբրեւ մարգարիտ՝ Աստծո կապանյան տաճարների բույլում:

Եկեղեցին կառուցված է կիսամշակ բազալտե քարերով ու կրաշաղախով:

Հորինվածքով ինքնատիպ, ավելի ճիշտ՝ եզակի կառույց է հայ ճարտարապետության մեջ. երկարավուն մի դահլիճ՝ թաղածածկ, որի հյուսիսային ու հարավային պատերը բաց կամարաշարեր են՝ կառուցված կարմրավուն քարերով, ինչի համար էլ նաեւ Կարմիր վանք է կոչվել:

Պահպանվել են եկեղեցուն շրջափակած կրկնակի պարիսպների հիմնամասերը:

Մեր մեծ բարեկամ Սերո Խանզադյանը ժամանակին պատմում էր, թե մինչեւ Երիցակը՝ *«…դա հեթանոսական տաճար էր՝ գուցե մի ողջ հազարամյակ Գառնիից էլ առաջ»:*

Սերո Սպարապետն ասում էր նաեւ, թե այդ տեղանքը նաեւ Կռավայր է կոչվել, ասել է թե՝ հեթանոսական կուռքերի, հեթանոսական աստվածների վայր…

Անշուշտ, դժվար է ասել, թե վանքի տարածքի կոնկրետ որ մասում է Սուրբ Երիցակի դամբարանը, եւ դա, ըստ էության, կարեւոր չէ այլեւս:

Կարեւորն այն է, որ Աստծո այդ տաճար այցելող ոչ մեծաթիվ հավատավորները ոգի են առնում այնտեղից, հիշում Երիցակին առնչվող պատումներ, նաեւ համոզվում (նրա արարումները տեսնելով), որ Երիցակը ժամանակին դասվել է հայոց ազգային-եկեղեցական սրբերի շարքը, ինչում համոզված էր նաեւ լուսահոգի Ռոբերտ Գրիգորյան-Էջանանցին՝ վկայակոչելով տեղեկությունը, որ Սուրբ քաղաք Երուսաղեմում եւ Բեթղեհեմում նրան իբրեւ սուրբ էին դիմում…

Մեր ուխտագնացության վերջում կարեւոր հետեւություններից մեկն այս էր՝ «Ով չի եղել Երիցու վանքում, չի եղել Կապանում»:

Անպայման այցելեք Երիցվանք…

Սամվել Ալեքսանյան

Լուսանկարները՝
Մարիամ Սարգսյանի եւ
Արմինե Մարգարյանի

Հովհաննես Թումանյանի զանգեզուրցի ընկերը

Այս տարի՝ փետրվարի 19-ին, լրացավ Ամենայն հայոց բանաստեղծի ծննդյան 150-ամյակը: Այդ հիշարժան օրվա առիթով նրա հայրենի գյուղում տեղի ունեցավ շքեղ տոնախմբություն, որին ներկա էին մեր կառավարության ղեկավարները, Ազգային ժողովի պատգամավորներ, Վրաստանից, Ռուսաստանից, մեր հանրապետությունից ժամանած գրողներ, նկարիչներ, դերասաններ, գրականագետներ եւ հազարավոր թումանյանասեր ընթերցողներ: Տոնախմբությունը տեղի ունեցավ ավանդական զուռնա-դհոլի նվագով, երգ ու պարով, մեծ բանաստեղծի երկնած ստեղծագործությունների հերոսների դերակատարումներով:

Թումանյանն այն եզակի մեծությունն է, որն ունի իր կյանքի, գրական, հասարակական գործունեությանը վերաբերող երեք թանգարան՝ Դսեղում, Երեւանում եւ Թբիլիսիում: Նրա անունն են կրում տասնյակ դպրոցներ, փողոցներ, համալսարան, թատրոն եւ հրապարակներ: Ի դեպ, նրա անունով դպրոցներ կան Վրաստանում, Բելառուսում, Ռուսաստանում, Սուխումիում, Նոր Ջուղայում, Լիբանանում եւ Ավստրալիայում:

Ահա, թե ինչպիսի գնահատական է տվել Չարենցը՝ *«Կա Մեծարենց, կա Տերյան եւ բազում այլ պոետներ կան, բայց Թումանյանն է անհաս Արարատը մեր նոր քերթության»:*

Իսկ դարձյալ անմահների շարքում դասված Պարույր Սեւակը, նկատի ունենալով նրա տաղանդը, գրել է. *«Թումանյանը եղել է եւ մնում է մեր լավաշ հացը, ինչը եղել է, մնում է անփոխարինելի»:*

Թումանյանը շատ մարդամոտ, ընկերասեր, առինքնող բնավորություն ուներ: Նա ընկերություն էր անում ոչ միայն գրողների, արվեստագետների, այլեւ շարքային գյուղացիների՝ հովիվների, այգեպանների, մեղվապահների, որսորդների, արհեստավորների հետ եւ հարկ եղած դեպքում օգնում իրեն դիմողներին:

Երբ 1883-ին նա Ջալալօղլիում (Ստեփանավան) Տիգրան Տեր-Դավթյանի բացած երկսեռ դպրոցում չորս տարի սովորելուց հետո տեղափոխվեց Թիֆլիս՝ Ներսիսյան դպրոցում ուսումը շարունակելու, ձեռք է բերում շատ մտերիմ ընկերներ, որոնց կողմից շատ է սիրվում: Նրա սրտամոտ ընկերներից էր նաեւ Կապանի տարածաշրջանի Սեւաքար գյուղից 13-ամյա Արամ Առաքելյանը: Արամի ուսումնական ընկեր՝ շիրակցի Արսեն Ղլաճյանն իր հուշերում գրում է. *«Զանգեզուրցի շինականի զավակ, ով բարեկամների օգնությամբ եկել էր Թիֆլիս ուսում առնելու, մարդ դառնալու, որպեսզի հետո գնա, գյուղական ցավերի տակ կքած իր ծնողներին օգնի: Արամն Օվանեսի մոտ եղած մեր հավաքույթներին պատմում էր իրենց գյուղի եւ գավառի ցավերից, ազգամիջյան անհաշտություններից, Բեկի եւ Մելիքի ձեռքն աշխատավոր գյուղացիության քաշածից:*

Օվանեսը հաճախ ընդհատում էր նրան՝ ասելով.

– Քո տունը չծակվի, դե ասա էդ քո Զանգեզուրը մեր Լոռու-Բորչլուի կտորն է, նույն ցավերով ու սրտամաշությունով»:

Արամ Առաքելյանի պատմելով՝ Թումանյանը բացառիկ ձիրքով օժտված, զգայուն ու տպավորվող, բնության ծոցում մեծացած երեխա էր:

«Բայց ուսանելիս նա միջակ աշակերտ էր եւ իր ընդունակություններով առանձնապես աչքի չէր ընկնում: Հասնելով մինչեւ չորրորդ դասարան՝ 1886 թ. սեպտեմբերին մի ինչ-որ առարկայից անհաջող վերաքննություն տալու հետեւանքով երկրորդ տարին մնում է նույն դասարանում, որից վիրավորված ու վշտացած դպրոցից դուրս է գալիս»:

Ինքնասեր ու զգայուն, նյութական միջոցներից զուրկ եւ անորոշ վիճակի մատնված գյուղացի պատանին կոնսիստորիայում գրագրի պաշտոն է ստանում: Կոնսիստորիայում մեր բանաստեղծը մոտիկից ծանոթանում է այդ հոգեւոր ատյանում տիրող կարգերի, պաշտոնյաների ու խնդրատուների փոխհարաբերություններին: Կոնսիստորիայի պաշտոնյաների արարքների ու խնդրատուներին շահագործելու մասին շատ զվարճալի, համով-հոտով պատմություններ է անում: Նրա այդ մերկացումները՝ ուղղված առաջնորդներից մինչեւ վերջին գրագիրը, պատճառ դարձան նրան գրագրի պաշտոնից արձակելուն:

Սիրուն Սարգսյանը՝ «Մեղրի համայնքի պատվավոր քաղաքացի»

Մեղրի համայնքի ավագանու հուլիսքսանվեցյան արտահերթ նիստը տարբերվում էր նախորդներից:

Նիստերի դահլիճը բազմամարդ էր՝ համայնքապետարանի աշխատակիցներ, ՀՈԱԿ-ների տնօրեններ, գյուղական բնակավայրերի վարչական ղեկավարներ եւ հյուրեր:

Նիստի օրակարգում մեկ հարց էր, որն ընդունվեց գրեթե առանց քննարկման, միաձայն ու ծափերով:

Սիրուն Վարշամի Սարգսյանին՝ իր ծննդյան ու աշխատանքային վերջին օրով, տրվեց «Մեղրի համայնքի պատվավոր քաղաքացու» կոչում:

Ներկաները բարձր գնահատեցին նրա մարդկային եւ մասնագիտական որակները, եռանդն ու պատրաստակամությունը, անմիջականությունն ու տարիների վաստակն ու գործունեությունը:

Ծաղիկներ, անակնկալներ, մաղթանքներ, հյուրեր եւ ժպիտներ. օրը մի փոքր հուզիչ էր եւ հետաքրքիր դրվագներով լի:

Ներկայացնում ենք Սիրուն Սարգսյանի կենսագրությունն ամբողջությամբ, որն այդ օրն իր ելույթում հնչեցրեց նրա աշխատանքային ընկեր, համայնքապետարանի ներկայացուցիչ Նունե Համբարձումյանը.

«Սիրուն Վարշամի Սարգսյան. ծնվել է 1953 թ. հուլիսի 26-ին Մեղրի քաղաքում:

Բարձր առաջադիմությամբ ավարտելով Մեղրու Ստեփան Շահումյանի անվան միջնակարգ դպրոցը՝ 1976 թ. ընդունվել է Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Ստանալով բանասերի որակավորում՝ Ս. Սարգսյանն իր փայլուն կենսագրության աշխատանքային առաջին քայլերն է սկսել «Արաքս» շրջանային թերթի խմբագրությունում՝ աշխատելով սրբագրիչ: Լինելով բանիմաց, պրպտուն, աշխատասեր, եռանդուն անձնավորություն՝ Ս. Սարգսյանն արագ կերպով բարձրանում է աշխատանքային կարիերայի սանդուղքով՝ շուտով դառնալով թերթի ռադիոխմբագիրը:

Համոզված եմ, որ Մեղրիի հասարակության ավագ սերունդը, այդ թվում նաեւ ես, լավ հիշում ենք Սիրուն Սարգսյանի հաճելի ձայնը՝ Մեղրու ռադիոյի յուրաքանչյուր թողարկմամբ: Շուտով նա դառնում է «Արաքս» թերթի գյուղբաժնի վարիչը: Աշխատանքի բերումով հաճախակի լինում է շրջանի գյուղերում, լուսաբանում գյուղացիների հոգսերն ու առօրյան եւ իր մարդասեր բնավորության համաձայն հնարավորինս աջակցում գյուղացիներին՝ լուծելու շատ հարցեր:

Խելացի, Մեղրու շրջանի հոգսերով ապրող, մեղրեցու ցավը հասկացող աղջկա նվիրված աշխատանքն աննկատ չի մնում իշխանությունների աչքից, եւ 1983 թվականին ՀԿԿ Մեղրու շրջկոմի բյուրոյի որոշմամբ նա տեղափոխվում է Մեղրու շրջկոմի կազմակերպական բաժին՝ որպես հրահանգիչ: Ինչպես միշտ՝ փայլուն աշխատանք, հայրենանվեր գործունեություն եւ աշխատանքային սրընթաց աճ: 1985 թվականին Ս. Սարգսյանն ընտրվում է ՀԿԿ Մեղրու շրջկոմի 3-րդ քարտուղար: 1988 թվականին արդեն զբաղեցնում էր 2-րդ քարտուղարի պաշտոնը: Այդ տարիներին՝ մոռացած ամեն ինչ, անգամ իր անձնական երջանկությունը, Ս. Սարգսյանը նվիրվում է Մեղրու հասարակությանը:

Համոզված եմ՝ համայնքում չկա մարդ, ով դիմած լինի Ս. Սարգսյանին որեւէ խնդրով, եւ վերջինս իր հնարավորությունների սահմաններում (գուցե նաեւ անհնարինի սահմաններում) օգնած եւ աջակցած չլիներ նրան: Ղեկավար աշխատանքի տարիներին նա դրսեւորել է բարձր պատասխանատվություն եւ մեծ հեռատեսություն՝ հաճախ լուծելով անհնարին թվացող հարցեր:

> *Այս պահին դժվար է Մեղրի համայնքում գտնել մեկին, ով հավասարաչափ ընդունելի եւ սիրելի լինի մեղրեցիների համար, ինչպես Ս. Սարգսյանը*

Ս. Սարգսյանի վաստակը գնահատվել է նաեւ մայրաքաղաքում, բազմիցս առաջարկներ է ստացել՝ մեկնելու Երեւան, զբաղեցնելու ավելի բարձր պաշտոններ, սակայն միշտ հավատարիմ է մնացել իր սիրելի Մեղրուն եւ մեղրեցիներին:

Արցախյան ազատամարտի տարիներին Ս. Սարգսյանը մեծ աջակցություն է ցուցաբերել Ադրբեջանից ներգաղթած մեր հայրենակիցների վերաբնակեցման խնդիրների լուծմանը:

Հայաստանի անկախացումից հետո՝ 1991-1996 թվականներին, աշխատել է Մեղրու շրջխորհրդի գործկոմում, 1996- 1999 թթ. զբաղվել է լրագրությամբ. ընդհանրապես Ս. Սարգսյանը երբեք չի դադարեցրել իր լրագրողական գործունեությունը: Լինելով Մեղրու մշակույթի, ավանդույթների կրող եւ նվիրյալ՝ մշտապես հանդես է եկել տարաբնույթ հոդվածներով՝ համագործակցելով մի շարք լրատվամիջոցների հետ:

Մեղրի համայնքում դժվար է գտնել մի ոլորտ, որտեղ Ս. Սարգսյանն իր ազդեցությունն ու հետագիծը չունենա:

ՏԻՄ-երի ձեւավորումից հետո աշխատել է Մեղրիի քաղաքապետարանում՝ մշակույթի եւ կրթության բաժնի պետ, 2007 թվականից համայնքային ծառայության մեջ է:

Իր վաստակաշատ, ազգանպաստ ու հայրենանվեր գործունեության համար Ս. Սարգսյանը 2010 թ. արժանացել է Ակսել Բակունցի անվան հուշամեդալի:

2016 թվականից՝ համայնքների խոշորացումից հետո, նա շարունակել է աշխատանքային գործունեությունը Մեղրիի համայնքապետարանում՝ իր փորձով, հայրենասիրությամբ, աշխատանքի նկատմամբ մեծագույն պատասխանատվությամբ եւ արհեստավարժությամբ օրինակ ծառայելով գործընկերներին:

Այս պահին դժվար է Մեղրի համայնքում գտնել մեկին, ով հավասարաչափ ընդունելի եւ սիրելի լինի մեղրեցիների համար, ինչպես Ս. Սարգսյանը, որին մենք՝ Մեղրի համայնքի բնակիչներս, մեծագույն ակնածանքով ու սիրով Սիրուն Վարշամովնա ենք ասում:

Սիրելի Սիրուն Վարշամովնա, համոզված ենք՝ որտեղ էլ Դուք լինեք, շարունակելու եք լինել մեր կողքին՝ միշտ ականջալուր մեղրեցու հոգսին, միշտ պատրաստակամ՝ աջակցելու ցանկացածիս:

Մեր շնորհակալությունը Ձեզ», - ասված էր ելույթում:

■

Քանի որ Ներսիսյան դպրոցը շատ հարուստ գրադարան ուներ, դպրոցի շատ սաներ օգտվում էին այդտեղ գտնվող պարբերականներից՝ «Հյուսիսափայլ», «Կռունկ հայոց», «Հայոց աշխարհ», կարդում անգամ արգելված գրականություն: Նրանք շատ մեծ հետաքրքրությամբ էին ընթերցում Գամառ Քաթիպայի, Ռաֆֆու, Սունդուկյանի, Պռոշյանի, Մուրացանի, Շիրվանզադեի, Պուշկինի, Լերմոնտովի, Տուրգենեւի, Դոստոեւսկու, Չերնիշեւսկու գրքերը:

Դպրոցի աշակերտները գրական հավաքույթներ էին կազմակերպում ամեն շաբաթ երեկո, խոսում գրականությունից, արվեստից, քաղաքականությունից, կարդում իրենց գրական գործերը: Նրանք հաճախ հավաքվում էին իրենց մոտ ընկեր Դավիթ Շահլումյանի մոտ, ով շատ պարզ, անմիջական, սիրալիր տղա էր եւ ապրում էր հարուստ անզավակ քրոջ տանը՝ Նորաշենի թաղամասում: Այդ տան հարեւանությամբ էր ապրում նաեւ Թումանյանը: Դավիթն ընկերներին տեղյակ էր պահել, որ Հովհաննեսը շատ լավ ոտանավորներ է գրում, քանիցս խնդրել էր, որ բերի կարդան, բայց մերժում է ստացել: Հորդորեցինք Դավիթին, որ մյուս շաբաթ երեկո մեր հավաքին հրավիրի Հովհաննեսին: Երբ նշանակված օրը գնացինք Դավիթենց տուն, Թումանյանն արդեն այնտեղ էր: Խնդրեցինք, որ բերի իր գրվածքները: Թումանյանը համեստորեն լռում եւ հրաժարվում էր՝ պատճառաբանելով, թե մի առանձին արժեքավոր բան չեն ներկայացնում այդ գրվածքները: Շնորհիվ մեր համառության՝ նա ստիպված եղավ զիջել: Շուտով եւեթ իր բնակարանից, որ նույն տան միջին հարկում էր գտնվում, բերեց թղթերից կարած մի մեծ տետր, մատիտն էլ թելով վրան կապած: Տետրը ձեռքից ձեռք անցավ, եւ սկսեցինք կարդալ մեկը մյուսից լավ՝ «Շունն ու կատուն», «Արեւ եւ լուսին», «Ամառվա գիշերը գյուղում», «Գութանի երգը», «Աղոթք», «Հին օրհնություն», «Լոռեցի Սաքոն» եւ մեկը մյուսից գողտրիկ ոտանավորներ: Առաջարկեցինք Թումանյանին՝ մի ժողովածու կազմել, որպեսզի բաժանորդությամբ հավաքված գումարով հրատարակել տանք: Թումանյանն իր կազմած ժողովածուն ներկայացրեց Թիֆլիսի գրաքննիչին: Նա մոտը երկար պահեց եւ մերժեց տպագրել: Ի դեպ, Թիֆլիսում գրաքննությունն ավելի խիստ էր, քան Մոսկվայում:

Թումանյանը մեր ընկերների ու բարեկամների խորհրդով իր ժողովածուն ուղարկեց Մոսկվա՝ տպարանատեր Մկրտիչ Բարխուդարյանին: Դա 1890 թ. ամռանն էր: Աշնանը լույս տեսավ Թումանյանի բանաստեղծությունների առաջին ժողովածուն: Այդ ժամանակ ես ուսուցչություն էի անում Ախալցխայում, երբ 1890 թ. նոյեմբերի սկզբներին լույս տեսավ նրա գիրքը, եւ ես ստանում եմ Թումանյանի նամակը, հրատարակված առաջին գրքի մի օրինակը:

Դա անչափ ուրախություն պատճառեց ինձ եւ ես ոգեւորված մի սրտառուչ նամակ գրեցի՝ ողջունելով նրա գրական ասպարեզ մտնելու առաջին քայլը:

Ներսիսյանում սովորելիս, Ա. Առաքելյանի ընկերների վկայությամբ՝ նա բացառիկ ընդունակ տղա էր, բոլոր առարկաներից գերազանց գնահատականներ էր ստանում, արժանանում ուսուցիչների գովասանքին, գերազանցիկի թոշակ էր ստանում եւ դրանով հոգում իր ապրուստը: Նրա շիրակցի ընկեր Արսեն Ղլաճյանն իր հուշերում գրում է, որ երբ Թումանյանի առաջին գրքի հրատարակման համար հինգ ընկերով, տարբեր գավառներում ուսուցչություն էին անում, իրենց ծանոթների ու բարեկամների տրամադրած գումարների, իրենց ստացած աշխատավարձի մի մասն ուղարկեցին բանաստեղծին. այդ կազմակերպման գործում ամենամեծ ավանդն ուներ Արամը: Գիրքը հրատարակվելուց հետո Արամը զարմացել էր, որ այդ ժողովածուի մեջ չէր զետեղվել նրա սքանչելի գրվածք «Շունն ու կատուն»: Դիրք ու անուն ունեցող որոշ գրականագետներ, որոնց թվում Գր. Արծրունին, Արասխանյանցը, որ 1889 թ. «Շունն ու կատուն» կարդալուց թունոտ արտահայտություն էր արել, ասել էր. «...Ասացեք, խնդրեմ, շունն ու կատուն եւ բանաստեղծությունը, սրանք ի՞նչ կապ ունեն իրար հետ, էն էլ էս տեսակ վայրենի լեզվով»:

(Թումանյանը ժամանակակիցների հուշերում, 1969թ. էջ 934)

1921 թ. սեպտեմբերին Ա. Առաքելյանը ճաշի է հրավիրվում Թումանյանի մոտ, ուր կային անվանի եւ պաշտոն ունեցող հայ կոմունիստներ. բանաստեղծն իրեն հատուկ հումորով ու զվարճախոսությամբ բնորոշեց իրեն:

- Ինչպես յուղոտ ձուն ներկ չի վերցնում, այնպես էլ ես չկարողացա այս կամ այն կուսակցությանը հարել:

«Որպես գրող նրա հմայքն այնքան մեծ էր, որ հետը զրուցելիս առիթ չէր տալիս քաղաքական խնդիրներ շոշափել:

(Ա. Առաքելյան, Թումանյանը ժամանակակիցների հուշերում էջ 290)

Արամի անշահախնդիր նվիրվածությունն իր սիրած բանաստեղծին՝ բարձր են գնահատել թե՛ Հովհաննեսը եւ թե՛ նրա շրջապատի մտավորականները:

Արամը միշտ մնաց սիրած պոետի տաղանդով հիացող, նրա գրական արժանիքները բարձր գնահատող ընկեր ու ոգեւորված երկրպագու:

Արամը երկար չաշխատեց մանկավարժության բնագավառում:

Նա մի քանի տարի Աղստաֆա կայարանում վարել է մի առեւտրական տան ներկայացուցչի պաշտոն, հետո տեղափոխվել Բաքու եւ զբաղվել լրագրությամբ, նշանակվել « Արեւ» օրաթերթի խմբագիր:

1933 թ. 63 տարեկանում մահկանացուն կնքեց Բաքվում :

Մենք իրավունք ունենք հպարտանալու, որ մեծն Թումանյանին նվիրված, նրան սատարող հայրենակից ենք ունեցել:

Լենդրուշ Հակոբջանյան
1969-ից Հայաստանի լրագրողների միության անդամ, Ստեփանավան

Ամուր ընտանիք, ծաղկուն Կապան.

այսպիսի խորագրով օգոստոսի 17-ին անցկացվեց Կապան քաղաքի օրը

էջ 6

կերտում են բնակիչները, ուստի ձեր սերն ու ջերմությունը նրա հանդեպ թող օգնեն լիարժեք դարձնելու այս տոնը» – ասաց մարզպետը եւ պաշտոնական տեքստը ընթերցելուց հետո անցավ անմիջական ու անկեղծ խոսքի՝ կապանցիներին հորդորելով միմյանց հանդեպ լինել ավելի հանդուրժողական, նաեւ ավելի մաքուր պահել բոլորիս սիրելի Կապանը, հարգել բոլորի աշխատանքը՝ փողոցի հավաքարարից սկսած մինչեւ ամենաբարձր պաշտոնյան:

Տոնական օրվա առիթով բարեմաղթանքի խոսքեր հնչեցրեց Սյունիքի նախկին մարզպետ, Կապանի պատվավոր քաղաքացի Էդիկ Բարսեղյանը՝ ներկաներին հիշեցնելով հայ-ադրբեջանական հակամարտության տարիները, երբ կապանցին պատվով կրեց պատերազմի ծանր խաչը, բանախոսն արժանին հատուցեց մանկավարժներին, բժիշկներին, բոլոր-բոլոր նրանց, ովքեր ամենածանր պայմաններում չլքեցին հայրենի քաղաքը:

Քաղաքի տոնին պատշաճող բարեմաղթանքի խոսքերով հանդես եկան Դավիթբեկի դպրոցի նախկին տնօրեն Գրիշա Գաբրիելյանը, «Ազատամարտ» կոմիտեի նախագահ Խորեն Հարությունյանը, Կապան համայնքի ավագանու անդամ Հայկ Հարությունյանը:

Կապանի համայնքապետ Գեւորգ Փարսյանը նախ հարկ համարեց հիշել այն մարդկանց վաստակն ու արժանապատիվ աշխատանքը, ովքեր տող առ տող գրեցին Կապան քաղաքի կենսագրությունը, քարը քարին դնելով սովորական բնակավայրից կերտեցին մերօրյա հոյակապ քաղաքը՝ յուրահատուկ մտածելակերպով: *«Հերթն այսօր մերն է ու մենք պիտի շարունակենք անել ամեն հնարավորը՝ հաջորդ սերունդներին ավելի բարեկարգ ու հարմարավետ, ծաղկող ու գեղեցիկ քաղաք փոխանցելու համար: Մեր խորհուրդն ու պատգամն է՝ դառնալ քաղաքի ներկան ու ապագան»-, ասաց համայնքի ղեկավարը եւ ավելացրեց. «Ոմանք ասում են, թե հեղափոխությունը Կապան չի հասել, բայց արդյո՞ք կապանցին հեղափոխվելու կարիք ունի, կարծում եմ, ոչ, քանզի նա միշտ առանձնացել է իր ինտելեկտով, ժայռի պես ամուր կամքով, իր սկզբունքներին հավատարիմ անփոփոխ արժեքներով եւ կայուն արժեհամակարգով եւ ամենակարեւորը՝ բարեպաշտ ավանդական ընտանիքով»:*

Հանդիսավոր նիստը նաեւ պատեհ առիթ էր գնահատելու համայնքի վաստակաշատ մարդկանց: Գեւորգ Փարսյանի կողմից Կապանի սերունդների կրթության ու դաստիարակության մեջ ծանրակշիռ ավանդ ունեցող մի խումբ մանկավարժներ պարգեւատրվեցին շնորհակալագրերով եւ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից թողարկված անվանական հուշադրամներով:

Իսկ վերջում տեղի ունեցավ տոնական համերգ, որի ժամանակ հնչեցին բացառապես Կապանին ձոնված երգեր:

Քաղաքի տոնին նվիրված բազմաբնույթ միջոցառումների շարքում առանձնացավ Հայաստանի ժամանակակից արվեստի թանգարանի Կապանի մասնաճյուղում կազմակերպված՝ վաղամեռիկ տաղանդավոր լուսանկարիչ Ռուբեն Մանգասարյանի (1960-2009) աշխատանքների ցուցահանդեսը, որ «Անկախության ճանապարհին» խորագիրն էր կրում: Ավելի քան 25 տարի աշխատելով ֆոտոլրագրության ասպարեզում՝ Ռուբեն Մանգասարյանը համագործակցել է աշխարհի առաջատար լրատվական գործակալությունների հետ, ստեղծել լուսանկարների պատկառելի պահոց, որտեղ կարեւորագույն տեղ են զբաղեցնում Հայաստանի Հանրապետության անկախության ճանապարհի մասին պատմող վավերագրական շարքը՝ Ղարաբաղյան շարժում, Սպիտակի երկրաշարժ, էներգետիկ ճգնաժամ եւ Արցախյան պատերազմ: Տանտիրոջ իրավունքով մասնաճյուղի տնօրեն Բորիկ Մինասյանը ներկայացրեց Մանգասարյան արվեստագետների ընտանիքը, նախեւառաջ, ընտանիքի գլխավորին՝ գեղանկարիչ Սարգիս Մանգասարյանին, որով սկիզբ է առնում Կապանի գեղանկարչական դպրոցը: Տիգրան Մանգասարյանը մանրամասներ ներկայացրեց եղբոր կյանքից, նշելով, որ Ռուբենը շաբաթներով առաջնագծում էր, իսկ երբ տուն էր գալիս, միայն լուսանկարչական ժապավենները երեւակելու համար: Նրա նկարներից երեւում է Ռուբենի նվիրվածությունն իր մասնագիտությանը՝ ֆոտոլրագրությանը: Ռուբեն Մանգասարյան մարդու եւ լուսանկարչի մասին հուշեր պատմեցին եւ գնահատանքի խոսքեր ասացին մայրաքաղաքից ժամանած նրա մտերիմները՝ Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան- ինստիտուտի տնօրեն Մարկ Գրիգորյանը, լուսանկարիչ Աշոտ Մուրադյանը, երաժշտական պրոդյուսեր Նիկա Բաբայանը: Ելույթների մեջ այն միտքն էր շոշափվում, որ Ռուբեն Մանգասարյանը հայ ֆոտոլրագրության մեջ ուրույն տեղ ունի եւ ստեղծել է լուսանկարչության ինքնատիպ դպրոց:

> *Քաղաքի տոնին նվիրված բազմաբնույթ միջոցառումների շարքում առանձնացավ Հայաստանի ժամանակակից արվեստի թանգարանի Կապանի մասնաճյուղում կազմակերպված՝ վաղամեռիկ տաղանդավոր լուսանկարիչ Ռուբեն Մանգասարյանի (1960-2009) աշխատանքների ցուցահանդեսը*

…Օգոստոսի 17-ին Կապանում միջոցառումների պակաս չկար: Մանուկների համար հետաքրքրական էր լարախաղացի ելույթը Կապանի համայնքապետարանի պուրակում, ժամը 17-ին մշակույթի կենտրոնի մեծ դահլիճում ելույթ ունեցավ ժողովագարանների համույթը (գեղարվեստական ղեկավար՝ Վիգեն Հովհաննիսյան): Հնչեցին Գուսան Աշոտի, Խաչատուր Ավետիսյանի, Գրիգոր Հախինյանի, Գուսան Հավասու, Արամ Խաչատրյանի ստեղծագործություններից: Գարեգին Նժդեհի հրապարակում բացօթյա ցուցահանդես էր կազմակերպվել, որտեղ իրենց ստեղծագործություններն են ցուցադրել ինչպես տարբեր կրթօջախներ, այնպես էլ անհատ ստեղծագործողներ:

Բացօթյա բեմահարթակը նախ տրամադրվեց «Կապան» համույթին, «Առիթմիա» ռոք խմբին, այնուհետեւ համերգային հարուստ ծրագրով հանդես եկավ մայրաքաղաքից հրավիրված «Ռեինկարնացիա» խումբը, որի կատարումներն ավելի սրտամոտ էին երիտասարդներին:

Իսկ ամենավերջում գիշերային Կապանի երկինքը երփներանգվեց տոնական հրավառության գույներով:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է 2019-2020 ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ / ՀԵՌԱԿԱ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐ / ԱՌԿԱ, ՀԵՌԱԿԱ

Հարգելի՛ դիմորդ,

Գորիսի պետական համալսարանը հայտարարում է բակալավրիատի եւ մագիստրատուրայի 2019-2020 ուստարվա ընդունելություն՝ հեռակա կրթաձեւով եւ շարունակում մագիստրոսի կրթական ծրագրով վճարովի տեղերի ընդունելությունը առկա կրթաձեւում:

Ընդունելության փաստաթղթերն ընդունվում են **օգոստոսի 25-ից մինչեւ սեպտեմբերի 15-ը**:

Տեղեկությունների համար զանգահարել հետեւյալ հեռախոսահամարներով՝
(098) 19-67-14, (077) 22-57-27 (պատասխանատու քարտուղար՝ Անի Գալստյան),
(098) 19-67-12 (հանրային կապերի եւ լրատվության բաժին):

Բակալավրի ու մագիստրոսի կրթական ծրագրերով 2019-2020 ուստարվա մասնագիտություններին, ընդունելության տեղերին եւ ուսման վարձավճարներին կարող եք ծանոթանալ կից տեղեկատվական թերթիկներում:

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ / ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

հ/հ	Մասնագիտություններ	Պետության կողմից ուսանողական նպաստների ձեւով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առանց տարեկետման իրավունքի	Ընդունելության տեղերի թիվը (վճարովի)	Ուսման վարձավճար (հազ. դրամ)
1.	Կրթության կառավարում	1	15	340
2.	Տարրական մանկավարժություն եւ մեթոդիկա	1	10	340
3.	Կենսաբանություն	1	10	240
4.	Մաթեմատիկա	1	10	240
5.	Պատմություն	1	10	320
6.	Հայոց լեզու եւ գրականություն	1	10	320
7.	Զբոսաշրջության կառավարում	1	15	360

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ / ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

	Մասնագիտություններ	Ընդունելության տեղերի թիվը (վճարովի)	Ուսման վարձավճար (հազ. դրամ)
1	Իրավագիտություն	20	430
2	Ձեռնարկությունների տնտեսագիտություն	20	360
3	Քիմիա	10	240
4	Հատուկ մանկավարժություն	15	340
5	Սոցիալական մանկավարժություն	15	340

Դիմում-հայտի հետ ներկայացվում են՝

- Մագիստրատուրայի ընդունելության դիմում-հայտ,
- Բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ եւ դիպլոմի հավելված),
- 4 լուսանկար (3x4 չափսի),
- Անձը հաստատող փաստաթուղթ,
- Ինքնակենսագրություն,
- Զինվորական գրքույկի բնագիրն ու պատճեն (առկայության դեպքում),
- 1500 ՀՀ դրամի անդորրագիր «Արարատ» բանկից (փաստաթղթերի ընդունման վճար):

ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿՐԹԱՁԵՎ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Հ/հ	Մասնագիտությունը	Ընդունելության քննությունները				Ընդունելության տեղերի թիվը	Ուսման վարձավճարը (հազ. դրամ)
		Մրցութային			Ոչ մրցութային		
1	Պատմություն	ՀԺՊ(գ)	Օտլ(գ)կա մ ԸՊ(գ)		Հլգ (գ)*	25	280
2	Հայոց լեզու եւ գրականություն	Հլգ(բ)	Հլգ(գ)			25	280
3	Մաթեմատիկա	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ (գ)*	15	230
4	Քիմիա	Ք(գ)	Կ(գ)** կամ Ֆ(գ)**		Հլգ (գ)*	10	230
5	Ֆիզիկա	Ֆ (գ)	Մ(գ)**		Հլգ (գ)*	15	230
6	Տարրական մանկավարժություն եւ մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ)**			25	300
7	Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ)	Օտլ(գ)		25	410
8	Տնտեսագիտություն	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)		25	320
9	Էլեկտրաէներգետիկա	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ (գ)*	25	250
10	Դեղագործական քիմիա	Ք(գ)	Կ(գ)** կամ Ֆ(գ)**		Հլգ (գ)*	15	280

Դիմում-հայտի հետ ներկայացվում են՝

1. Միջնակարգ կրթության ատեստատը, միջին մասնագիտական եւ մասնագիտական տեխնիկական կրթության մասին փաստաթուղթը (բնօրինակը),
2. 6 լուսանկար (3x4 սմ չափսի),
3. Անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական),
4. Զինվորական գրքույկ եւ զինվորական կոմիսարիատից տեղեկանք ժամկետային զինվորական ծառայության անցնելու մասին,
5. Արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են համապատասխան փաստաթղթեր (1-ին կամ 2-րդ խմբի եւ մինչեւ 18 տարեկան մանկուց հաշմանդամության, ինչպես նաեւ զինծառայող ծնողի զոհվելու մասին, առանց ծնողական խնամքի մնացած լինելու մասին),
6. Միջազգային ու հանրապետական մրցույթների (օլիմպիադաներ, փառատոներ) դիպլոմները,
7. 2019 թ. ավարտական միասնական քննությունների վկայագիր,
8. Փասաթղթերի ընդունման, ձեւակերպման համար 1500 ՀՀ դրամ եւ յուրաքանչյուր քննության համար 1500 ՀՀ դրամ վճարելու վերաբերյալ «Արարատ» բանկի անդորրագիրը (արտոնություններից օգտվող դիմորդներն ազատվում են ընդունելության քննությունների վճարից):

Հասցեն՝ ք. Գորիս, Ավանգարդ 2, Գորիսի պետական համալսարան, 1-ին մասնաշենք, 1-ին հարկ:

ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «Կապանի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է 2019 - 2020 ուս. տարվա ընդունելություն թափուր մնացած անվճար եւ վճարովի ուսուցման տեղերի համար առկա ուսուցմամբ հետեւյալ մասնագիտությունների գծով

Մասնագիտությունը	Որակավորումը	Ուսման տեւողությունը (տարի)	Ընդունելության տեղերի թիվը		1 տարվա վարձը վճարովի ուսուցման համար (դրամ)
			Անվճար ուսուցման	Վճարովի ուսուցման	
Դեղագործություն	Դեղագործ	2	0	5	220 000
*Դեղագործություն	Դեղագործ	3	0	3	
Քույրական գործ	Բուժքույր, բուժեղբայր	3	0	9	220 000
*Քույրական գործ	Բուժքույր, բուժեղբայր	4	0	4	
Բուժական կոսմետոլոգիա	Բուժքույր/կոսմետոլոգ	2	0	4	230 000
*Բուժական կոսմետոլոգիա	Բուժքույր/կոսմետոլոգ	3	0	3	
Ատամնատեխնիկական գործ	Ատամնատեխնիկ	2	1	9	230 000
*Ատամնատեխնիկական գործ	Ատամնատեխնիկ	3	0	2	
Բուժական մերսում	Բուժքույր / բուժեղբայր մերսող	2	0	10	210 000
Մանկաբարձական գործ	Մանկաբարձ	3	0	10	220 000
* Մանկաբարձական գործ - հիմնական ընդհանուր կրթությամբ	Մանկաբարձ	4	2	5	

Քոլեջ կարող են դիմել ընթացիկ տարում այլ մասնագիտական ուսումնական հաստատություն մրցույթով չանցած այն դիմորդները, ովքեր մինչեւ օգոստոսի 22-ը ներառյալ կներկայացնեն ընդունելության կարգի 19-րդ կետով պահանջվող փաստատթղթերը, ինչպես նաեւ հանձնած «Կենսաբանություն» առարկայի քննության գնահատականի վերաբերյալ տեղեկանքը: Հիմնական կրթությամբ վճարովի ուսուցման տեղում կարող են դիմել 19 տարեկանից բարձր տարիք ունեցող հիմնական կրությամբ դիմորդները:

Ընդունելությունն իրականացվում է քոլեջում:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել քոլեջի ընդունող հանձնաժողովին:

Հասցեն՝ ք. Կապան, Շահումյան 37ա
Հեռախոս 5-25-70, 094 459936

Հայտարարություն

ՀՀ ԿԳՄՍՆ «Կապանի N2 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ը հայտարարում է տարածքի վարձակալության մրցույթ՝ աշակերտների որակյալ սննդի ապահովման (բուֆետի կազմակերպում) նպատակով: Մրցույթը տեղի կունենա 2019թ օգոստոսի 30-ին՝ ժամը 14:00-ին:
Հայտերը ներկայացնել մինչեւ օգոստոսի 27-ը, ժամը 15:00, Մելիք-Ստեփանյան 5 հասցեով:
Տեղեկությունների համար զանգահարել (0285) 2 48 79 կամ (093) 62 74 04 հեռախոսահամարներով:

Կորել է

Գագիկ Կարապետյանին պատկանող էքսկավատորի A003508 համարի տեխնիկական անձնագիրն եւ ՅՕ 2126 15 SL 82 պետհամարանիշը: Համարել անվավեր:

Հայտարարություն

ՀՀ ԿԳՄՍՆ «Գորիսի N4 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ը հայտարարում է տարածքի վարձակալության մրցույթ՝ աշակերտների որակյալ սննդի ապահովման (բուֆետի կազմակերպում) նպատակով: Մրցույթը տեղի կունենա 2019թ օգոստոսի 27-ին՝ ժամը 14:00-ին
Հայտերը ներկայացնել մինչեւ օգոստոսի 25-ը, ժամը 15:00:
Տեղեկությունների համար զանգահարել 284 2-58-31, 096 73-71-43

Շնորհակալություն

Խորին երախտագիտություն եմ հայտնում Կապանի բժշկական կենտրոնի տնօրեն Կարեն Մելքոնյանին, վիրաբույժ Ալինա Աղաբաբյանին, նյարդաբան Նաիրա Ղազարյանին, որոնց պրոֆեսիոնալիզմի եւ հոգատարության շնորհիվ փրկվեց իմ կյանքը:

Ժորա Վեզիրյան
Երկրորդ կարգի հաշմանդամ

«Տաշիր պիցցայի» մուտքը մարզկենտրոն

Օգոստոսի 20-ին Կապանի Շահումյան 23/33 հասցեում բացվեց «Տաշիր պիցցայի» մարզում առաջին պիցցայանոցը: Ինչպես «Սյունյաց երկրին» հայտնեց «Տաշիր պիցցա» պիցցաների ցանցի տնօրեն Վաղինակ Ղազարյանը, իրենց ընկերությունը հանրապետությունում գործում է 2005 թվականից, մասնաճյուղեր ունի չորս մարզում եւ Արցախում, ու հասունացել էր նաեւ Սյունիքում «Տաշիր պիցցա» ունենալու ժամանակը: Սա ընկերության 25-րդ մասնաճյուղն է մարզերում: Սյունիքում բացված մասնաճյուղով մարզկենտրոնում կստեղծվի 30-35 աշխատատեղ, իսկ առայժմ կապանցիներին ժամանակավորապես աջակցելու համար աշխատակիցներ են ժամանել մայրաքաղաքից: *«Փորձել ենք կապանցիների համար ստեղծել հաճելի միջավայր, սա մեր ընկերության ռազմավարությունից մեկն է՝ հաճելին զուգակցել օգտակարի հետ»,* – ասաց Վաղինակ Ղազարյանը: Նոր բացված սենդի օբյեկտն այցելուին առաջարկում է քսանից ավելի սենդատեսակ, իսկ ոգելից խմիչքներից կմատուցվի միայն գինի եւ գարեջուր:

Սպասարկման նոր օբյեկտի բացմանը մասնակցում էր Կապանի համայնքապետ Գեւորգ Փարսյանը, ով կարեւորեց «Տաշիր պիցցայի» մուտքը Կապան՝ նշելով, որ սրահի ներքին կահավորանքը եւ հարդարանքը տրամադրող են, եւ հարմար կլինի ընտանիքներով այցելել, ինչպես նաեւ այդտեղ հրավիրել հյուրերին. Կապան այցելած զբոսաշրջիկներն էլ հաճույքով կօգտվեն մասնաճյուղի ծառայություններից:

Հաճելի իրադարձության առիթով համերգային ծրագրով ելույթ ունեցան ճանաչված երգչուհի Սոնա Ռուբինյանը եւ Գարիկ Պապոյանը, ովքեր օրը տոնական դարձրին:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Սգում է Կապանը

Երբ մարդն աշխարհ է գալիս՝ մեկն էլ ավելանում է աշխարհի վրա:

Իսկ երբ մարդը գնում է աշխարհից՝ պակասում է քեզնից...

Ու իջնում է ծանր մի լռություն. հոգնում ու լռում են երազները...

Անչափ դժվար է անցյալ ժամանակով խոսել այնպիսի մարդու եւ ֆուտբոլային վառ անհատականության մասին, որպիսին էր Միշա Մանուչարյանը:

Ժողովուրդը նման դեպքերում ասում է. «Նա մեռնելու մարդ չէր»: Այո՛, Միշան ապրելու եւ գործելու ճանապարհներ դեռ ուներ անցնելու, չնայած, որ նրա սպորտային ձեռքբերումները նշանակալից են եւ ծանրակշիռ:

Մեզ համար նա վստահելի եւ սիրված գործընկեր էր, մարդ, ով մեր ծանր ու հեղհեղուկ օրերում ծառայեց մեկ նպատակի՝ կապանյան ֆուտբոլի պահպանմանն ու զարգացմանը:

Շնորհալի ֆուտբոլիստ եւ մարզիչ Միշա Մանուչարյանը անվերապահորեն թողեց վառ հետագիծ, թողեց հիմնարար գործեր: Իր տոկունության մեջ էլ չափազանց փխրուն էր: Մենք դեռ շատ կփնտրենք նրան Կապանի որեւէ փողոցում, մեր հեռավոր ու մոտիկ գյուղերում, իր սիրելի մարզադաշտում ու, ավաղ, չենք գտնի: Դժվար է մխիթարական խոսքեր գտնել: Մխիթարականը մեր սիրելի ընկերոջ թողած գործերն են եւ նրա բարի հիշատակը, որը միշտ մեզ հետ կլինի:

Ես մշտապես տեսնում-զգում էի, թե ինչպես էր մեր իններին մեջ ամենահինը վառվում հաջորդ վայրկյանով, թե ինչպես էր նա իր անելիքով լցված ու լծված հաջորդ վայրկյանին: Դու նրա հետ մտքով դեռ խոսում ես, իսկ նա արդեն մտորում է ու գիտի, թե իր հաջորդող քայլերն ինչպես պիտի կազմակերպել: Որ հասցնի, որ լինի ԼԱՎԱԳՈՒՅՆԸ...

Այս ո՞ւր ես շտապում, ա՛յ եղբայր... Չէ՞ որ այնքան բաներ ունենք դեռ միասին անելու եւ դրանով լցնելու մեր հաջորդ գոյավայրկյանը:

Կյանքը մեզ տրված է ամեն ինչին դիմանալու համար: Իսկ դու չդիմացար, ուրեմն...

Եվ քո տեղը մնաց թափուր...

Դեռ ականջիս մեջ են մեր վերջին խոսակցության պատառիկները...

Արսեն Գրիգորյան
Ֆուտբոլասեր հասարակայնության անունից

«ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄԱՌ ԿԱՊԱՆ-2019» ԱՄԵՆԱՄՅԱ ՓԱՌԱՏՈՆԸ

Օգոստոսի 10-ին Կապանի Գարեգին Նժդեհի անվան հրապարակում տեղի ունեցավ «Ուսանողական ամառ Կապան-2019» ամենամյա փառատոնի հանդիսավոր բացման արարողությունը:

Օգոստոսի 1-ից սկսած՝ այս փառատոնը համախմբել է կապանցի մոտ 80՝ տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող ուսանողների, այդ թվում նաեւ՝ այս տարի բուհ ընդունվածներին: Եվ մինչ այսօրվա միջոցառման հանդիսավոր բացման արարողությունն էլ երիտասարդներն ակտիվ եւ հագեցած օրեր են հասցրել անցկացնել՝ բարեկարգելով իրենց տուն Կապանը:

«Ուսանողական ամառ Կապան-2019»-ի սկիզբն ազդարարող միասնական պարային համարից հետո ողջույնի խոսք ասացին Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանը, գեղարվեստական ղեկավար Կոնստանտին Կոզմանովը եւ փառատոնի կազմկոմիտեի նախագահ Հրանտ Արզումանյանը:

Ուսանողներին օրհնանքի խոսք ասաց Կապանի Վահանավանք վանական համալիրի հոգեւոր հովիվ Տեր Ավետիք քահանա Մարտիրոսյանը:

Դե իսկ փառատոնի բացման պատիվը տրվեց Կապան համայնքի ղեկավար Գեւորգ Փարսյանին, ով ողջունեց ուսանողներին փառատոնի մեկնարկի առթիվ եւ շնորհավորեց նաեւ այն երիտասարդներին, ովքեր սեպտեմբերին իրենց առաջին քայլերն են անելու դեպի ուսանողական կյանք: *«Գիտակցելով եւ կարեւորելով երիտասարդների դերն ու նշանակությունը համայնքի զարգացման գործում՝ ցանկանում եմ, որ փառատոնից հետո եւս շարունակեք առավել սրտացավությամբ ձեր ուժն ու եռանդը ներդնել ի շահ հայրենի համայնքի, ձգտեք մշտապես կատարելագործվել, խորացնել ու ընդլայնել ձեռք բերած գիտելիքները եւ երբեւիցե չընկճվեք դժվարությունների ու բարդությունների առջեւ»,* – իր խոսքում ասաց համայնքի ղեկավարը:

Փառատոնն այս անգամ կրում էր «Իմ տուն Կապան» խորագիրը եւ էապես տարբերվում էր նախորդ տարիների միջոցառումներից թե՛ իր ծեւաչափով, թե՛ իր բովանդակությամբ: Համերգային ծրագիրն իրենից ներկայացնում էր մի բեմականացված ծրագիր, որտեղ իրենց գեղեցիկ ելույթներով հանդես եկան նաեւ շնորհալի ուսանողները: Համերգի վերջում արդեն բեմից ներքեւ տիրում էր ուրախ տրամադրություն, եւ տարածքը վեր էր ածվել պարահրապարակի:

Հիշեցնենք, որ փառատոնի հովանավորը եւ նախաձեռնողը Կապանի համայնքապետարանն էր, իսկ այն կազմակերպում եւ համակարգում էր համայնքի ղեկավարին կից երիտասարդական խորհուրդը: ■

Մահացել է Գորիսի եւ Կապանի նախկին ոստիկանապետ Սեւադա Առաքելյանը

2019 թ. օգոստոսի 9-ին, կարճատեւ հիվանդությունից հետո, մահկանացուն կնքեց Սեւադա Առաքելյանը:

Նա երկար տարիներ աշխատել է Սյունիքի մարզի ոստիկանական կառույցներում:

Սեւադա Առաքելյանը Արցախյան պատերազմի տարիներին, լինելով Գորիսի ոստիկանապետի տեղակալ, ակտիվ մասնակցություն է ունեցել սահմանամերձի պաշտպանության գործում:

«Սյունյաց երկրի» խմբագրակազմը ցավակցում է Սեւադա Առաքելյանի հարազատներին ու մերձավորներին՝ նրա անժամանակ մահվան կապակցությամբ: ■

Հայկանուշ Սաֆարյան

2019թ. օգոստոսի 13-ին, կյանքի 95-րդ տարում մահկանացուն կնքեց Կապանի եւ Սյունիքի երաժշտական կյանքում լուսավոր հետք թողած, հայ ազգային երաժշտության երախտավոր Շամիր Հարությունյանի կինը՝ Հայկանուշ Ալավերդիի Սաֆարյանը:

Հ. Ա. Սաֆարյանը ծնվել է 1924թ. ՀԽՍՀ Ղափանի շրջանի Կաղնուտ գյուղում: 1944թ ամուսնացել է համագյուղացի Շամիր Հարությունյանի հետ: Նորաստեղծ ընտանիքը 1945 թվականից բնակություն է հաստատել Ղափանում: Տիկին Հայկանուշն իր ողջ կյանքը նվիրել է հետպատերազմյան ծանր տարիներին ծնված երեք երեխաների դաստիարակությանը եւ պատերազմի հաշմանդամ ամուսնու խնամքին, ում առողջությունը, նրա հոգատար վերաբերմունքի շնորհիվ, 1951թ լիովին վերականգնվեց: Հ. Սաֆարյանն առանձնակի ուշադրություն է դարձրել երեխաների կրթությանը եւ համակողմանի զարգացմանը: Բնակարանային սուղ պայմաններում կարողացել է հնարավորություն ստեղծել ավագ որդու՝ Ս. Բալասանյանի (Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղի հիմնադիր, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր) տեխնիկական ունակությունների ձեւավորման համար՝ ինչն էլ կարեւոր նախադրյալ է հանդիսացել նրա հետագա գիտական գործունեության համար:

Բարի, համեստ, ավանդապահ, ընտանիքին անմնացորդ նվիրված, մարդասեր, հայ կնոջ իսկական տիպար էր Հ.Սաֆարյանը, ում հիշատակը երկար կմնա նրա գերդաստանի անդամների եւ բարեկամների հիշողության մեջ:

Մի խումբ բարեկամներ

Առաջին անհատականը

«Ուսանողական ամառ-2019» փառատոնի շրջանակում Կապանի մշակույթի կենտրոնի փոքր դահլիճի նախասրահում տեղի ունեցավ կապանցի երիտասարդ գեղանկարիչ Տիգրան Պողոսյանի ստեղծագործությունների անհատական ցուցահանդեսի բացումը, որին մասնակցում էին Կապանի համայնքապետ Գեւորգ Փարսյանը, մարզկենտրոնի արվեստասերներ: Երիտասարդ արվեստագետը նոր է ավարտել Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիան՝ ՀՀ ժողովրդական նկարիչ Փարավոն Միրզոյանի արվեստանոցը: Իսկ մասնագիտական առաջին դասերն առել է գեղանկարիչ Հրանտ Էլչյանից: Ցուցադրանքում մոտ հիսուն գեղանկար կար՝ բնանկարներ,կոմպոզիցիաներ, նատյուրմորտներ, որոնք որոշակի պատկերացում են տալիս սկսնակ գեղանկարչի նախասիրությունների մասին: Առաջին անհատական ցուցահանդեսի բացման առիթով շնորհավորանքի խոսք ասաց Սուսաննա Մարտիրոսյանը՝ մաղթելով գեղանկարչին ստեղծագործական նոր հաջողություններ:

- Շատ բան չեմ կարող ասել իմ մասին, դա կարող են անել իմ վրձնած կտավները: Բոլորիդ ներկայությունը ոգեւորիչ է ինձ համար, նաեւ պարտավորեցնող, որ ավելի հետաքրքիր գործեր ստեղծեմ: Շնորհակալ եմ բոլոր նրանց, ովքեր հավատացին ինձ եւ շարունակում են հավատալ, - ներկաներին դիմեց Տ.Պողոսյանը եւ հավելեց, որ ճանաչման արժանանալու ամենակարճ ճանապարհը աշխատասիրությունն է:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Սյունյաց Երկիր
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
www.syuniacyerkir.am www.facebook.com/SyuniacYerkirNewspaper/
Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am
® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):
Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1200, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 22.08.2019թ.:
QR ԿՈԴ